ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 28. Հատուկ միջոցների կիրառումը

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն կիրառել ձեռնաշղթաներ, ռետինե մահակներ, արցունքաբեր նյութեր, փականքները բացելու գործիքներ, տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու համար նախատեսված միջոցներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ:

2. Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար.

2) մաքսային մարմնին պատկանող կամ նրա հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.

3) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց.

4) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե դրա վարորդը չի կատարում մաքսային ծառայողի օրինական պահանջները:

«2[1]. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերից բացի մաքսային մարմնի հանրային ծառայողները ծառայողական շներ կարող են կիրառել նաև՝

1) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

2) քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

2[2]. Ծառայողական շների կիրառումն արգելվում է հետևյալ դեպքերում՝

1) մարդու կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնալու դեպքում.

2) ծառայողական շան նպատակային նշանակությանը ոչ համապատասխան գործողության կատարման դեպքում.

3) այն դեպքում, երբ առկա են այնպիսի պայմաններ, որոնք կարող են նպաստել շան աշխատունակության խաթարմանը և (կամ) կարող են վտանգել նրա առողջությունը:»:

3. Հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց, անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:

(28-րդ հոդվածը լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի հոդվածին վերաբերող անցումային դրույթ)

Հոդված 29. Զենքի գործադրումը

1. Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պաշտոններ զբաղեցնող մաքսային մարմնի հանրային ծառայողներին ծառայողական պարտականություններ կատարելիս իրավունք է տրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրելու, պահելու և օգտագործելու զենք:

2. Զենք կրելու, պահելու և օգտագործելու իրավունք ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն դա գործադրել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար, կամ եթե առկա է նրանց կյանքին կամ առողջությանն սպառնացող իրական վտանգ.

2) զենքի կամ հատուկ միջոցների հափշտակման փորձը կանխելու համար:

3. Մինչև զենքի գործադրումը մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է կատարի նախազգուշական կրակոց, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի:

4. Արգելվում է զենքի գործադրումը հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և մաքսային ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

5. Մաքսային մարմնի հանրային ծառայողներին զենքով ապահովելու կարգը, զենքի ու ~~զինամթերքի~~ *ռազմամթերքի* ցանկը սահմանում է Կառավարությունը:

(29-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն, լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի հոդվածին վերաբերող անցումային դրույթ)